




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ժ. — ՇՐՋԱՆ ԻԳ. 1891 ՏԱՐԻ ԻԳ. ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ.

- Այր ոմն էր մեծատուն եւ ազանէր բեհեզս եւ ծիրանիս
- եւ ուրախ լինէր հանապաղ առատապէս: Իւ աղքատ ոմն
- անուն Ղաղարոս անկեալ դնէր առ դրանն նորա վիրա-
- ւորեալ:

(Ղուկ. ԺԶ. 19-20)

Չեղ չէ՞ զարմացնում արդեօք այս հասարակ խօսքերի մէջ պարունակած հակապատկերը. անցել է 18 դար այդ խօսքերը արտասանած օրից, բայց մի որ և է բան նոքա կորցրել են իրանց էութեանը:

թիւնից: Հարստութիւն և աղքատութիւն նոյնպէս գոյութիւն ունին և այժմ, ինչպէս և այն ժամանակ, և նրանց կռիւը միմեանց հետ կաղմում է բոլոր հասարակական հարցերից ամենանշանաւորը, ամենագիտարը, ամենամեայը և առաւել սպառնալիւն ապագայի համար: Չը կայ նախագծերի պահասութիւն այս ահռելի հարցը վճռելու մասին: «Հարկաւոր չեն հարուստներ», ասացին մի կողմից և իսկոյն լսելի եղան թէ ինչպէս ամբօխը կրկնեց այս անմիտ բացականչութիւնը: Հարկաւոր չեն հարուստ մարդիկ, ոչնչացնենք առատութիւնը, սպանենք գրամագլուխը, աղատուենք ժառանգութեան իրաւունքից»: Բայց այսպէս մտածող—խօսողները չէին նկատում, որ նրանք մահառիթ վէրք են տալիս աղատութեան, սպանում են եռանդը, հետեւապէս և իսկական աշխատանքը, թողնելով միմիայն վայրենի հաւասարութիւնը, որոնք վաղուեան համար ոչինչ չը ժողովելով, անհոգ քնում են մինչև որ քաղցը չէ ստիպում նոր որս որոնելու: «Աղքատներ չը պէտք է լինեն», աղաղակեցին ներկայ դարում ուրիշ ձայներ և զարհուրելի արձագանքը նրանց պատասխանեց. «Աղքատներ չը պէտք է լինին»: Լաւ կը լինէր եթէ այդ աղաղակը մնար միմիայն լոկ ցանկութիւն և բուռն սիրոյ արտայայտութիւն: Բայց նրանից շինեցին դաւանանք և ուխտ: Գանուեցան նաև, այնպիսիք, որոնք ասում էին թէ պետութիւնը պէտք է ապահովացնի աշխատանքը բոլորի համար:

Պետութիւնը պէտք է կերակրի աղքատներին, ասում էին ուրիշները, բայց այսպէս խօսելով չէին նկատում, որ պետութեանը մի անհնարին դեր են յատկացնում, որ ստեղծում են մի արհեստական, անագորոյն, կեանքի մէջ բոլորովին անիրագործելի բան, չը հասկացան որ նրանք վատ են ճանաչում մարդկային բնութիւնը, որովհետև հրամայել որ այլ ևս աղքատութիւն չը լինի, նշանակում է հրամայել որ չը լինի ծովութիւն, յանցանք, կիբք, մեղք: Այսուամենայնիւ քանի որ այս տեսական վարդապետութիւնները մէկը միւսին յաջորդում էր, խաբուսիկ ցնորքներով մնորեցնելով ամբօխին, որին անմիտութար և առանց հացի պէտք է թողնէին, չարութիւնը շարունակում էր իւր թէև դանդաղ՝ բայց ահարկու գնացքը դէպի առաջ: Դիւրին է ասել, հարուստների, աղքատների չը պէտք

է լինին: Բայց փորձեցէք լինել Անգլիայում, այդ մարդասիրութեան և քաղաքական անտեսութեան կրասիքական աշխարհում: այնտեղ դուք կը տեսնէք աշխարհի ամեն ծայրերից ժողոված վիթխարի հարստութեան հետ, մի աննկարագրելի աղքատութիւն, որ ամենայն օր ի հանդէս գնելով իւր վայրենի անբարոյականութիւնը, գիշերները թագնւում է միմիայն՝ անգնդախոր վայրերում, որոնց մասին մի գլխաւոր ապելու իւր գեղեցիկ յօդուածում իրաւացի նկատում է, որ միմիայն Առողմը կարող էր ապաստանարան տալ այդ տեսակ զազիր ու պիղծ գործերին: Ահա թէ 19-դ դարում ուր ենք հասել:

Հարուստներ և աղքատներ նոյնպէս գոյութիւն ունին և այժմ ինչպէս և վերոյիշեալ բնաբանի խօսքերի ժամանակ, և եթէ առաջինների հարստութեան միջոցները առատացել—մեծացել է 18 դարերի քաղաքակրթութեան յառաջագիմութեան շնորհիւ, երկրորդների աղքատութիւնը նոյնպէս գոյութիւն ունի, նոյնպէս արիւնքամ է լինում ինչպէս և առաջ:

Ինչպէս պէտք է բուժել այս հասարակական չարութիւնը, ես հրաժարւում եմ այս կնճռոտ հարցը վճռելուց. ես չեմ կամենում հետազօտել զանազան դրութիւններ, ես վերցնում եմ մարդկութիւնը ինչպէս նա կայ. ես իմ առաջ տեսնում եմ հարուստներ և աղքատներ, նրանք կը լինեն և վաղը, ինչպէս կային և երեկեան օրը: Յանուն Աւետարանի ես ցանկանում եմ մի անգամ ևս յիշեցնել առաջինների պարտականութիւնը երկրորդների վերաբերութեամբ: Եւ համաձայն եմ, որ սա նոր բան չէ, ինչպէս նոր չէ և չարչարանքը: Եւ խօսելու եմ այն մասին, որի մասին երեւի դուք հարիւր անգամ լսած էք. բայց ի՞նչ անենք. ես ձեզ խոստանում եմ ոչինչ չը խօսել գլխաւորութեան և զոհաբերութեան մասին այն ժամանակ միայն, երբ ետականութիւնը կը մեռնի, կանհետանայ աշխարհի երեսից:

Եւ այնպէս ահա Ղազարը հարուստի դրանը փռուած է. նախ և առաջ պահանջում եմ որ հարուստը նայէր Ղազարի վերայ: Հարուստի անուան տակ եւ հասկանում եմ նրանց բոլորին, որոնք իրանց իշխանութեան տակ մի որեւէ Ղազար ունին, որոնք կարող են

օգնել և նորա տանջանքները թեթևացնել: Նայել Ղազարի վերայ՝ բայց ինձ լաւ հասկացէք. բանը նրանում է, որ մօտից անցնելով, մի որեւէ անբաղդի պատմութեամբ գլխաշարժուենք. շարտենք նրան որեւէ ողորմութիւն, կամ յայտնի գեր խաղանք որեւէ բարենպաստակ գործում և այդպէս խիղճը անգործացնելով միտքաբուենք բարձրաձայն քարոզութեամբ, որ ներկայ դարը բարեգործութեանց և մեծահոգութեանց դար է: Բանը նրանումն է, որ թշուառութիւնը երես առ երես տեսնէք և ճանաչէք. ահա ինչ է նշանակում նայել Ղազարի վերայ. բայց անո՞ւմ են արդեօք այդ: Մեր դարը բազմատեսակ բարեգործութեանց, ընկերութեանց և հիմնարկութեանց դար է. մեծ յառաջադիմութիւն է, կասեն մեզ այդ ճշմարիտ է. բայց կորստաբեր է այդ յառաջադիմութիւնը եթէ նա կը խանգարի հարուստին՝ աղքատի, բազդաւորին՝ անբաղդի հետ անմիջական յարաբերութիւն ունենալ, որ պատուիրում է աւետարանը իւրաքանչիւր երեսում և որը ոչ մի հիմնարկութեան հետ փոխարինել անհնարին է:

Մեզ կարող են պատասխանել, որ այդ տեսակ յարաբերութեանց համար ժամանակ չը կայ. այժմ կեանքը բոլոր ասպարէզներում առաւել նման է սրնթաշ գնացրի. իւրաքանչիւրը ցանկանում է առաջինի նպատակին հասնել:

Իւրաքանչիւր ասպարէզ մրցողներով է կուտակուած. նորեկները անհամբերութեամբ հրում են միմեանց և ցանկանում են իրանց համար տեղ գտնել. սա կատարեալ կռիւ, իրարանցումն է, որի միջոցով ամենայն ջանք պէտք է գործ գնել առաջ անցնելու, ապա թէ ոչ ջարդ ու փշուր կարող էք լինել: Այն ժամանակից երբ մարդս աշխատում է, գուցէ աշխատանքը այնքան լարուած և սեղմուած չէ եղել որչափ հիմայ. այժմ ոչ թէ գնում այլ արշաւում են. վայ նրան, ով կը կանգնի մի փոքր շունչ առնելու: Բայց միթէ՞ այդ պարտականութիւնը այդչափ կեանքը ճնշում է. ես այս նրանց եմ հարցնում, որոնց Աստուած փոքր ինչ կարողութիւն և բազդաւորութիւն է շնորհել: Ճշմարիտ է՝ որ դուք բոլորովին ազատ ժամանակ չունէք: Եւ այն հասարակութեան մէջ, որտեղ չեմ ասում թէ թագաւորում է քրիստոնէական ոգի, այլ

Հասարակ արգարութիւն, միթէ՞ դուք կարծում էք, որ Հարուստ մարդկանց ազատ ժամանակը, Նախախնամութեան կամքին համաձայն, այն աղքատներին չէ պատկանում, որոնք խեղդուած են ամենօրեայ մշակութեան մէջ: Ձեզ ազատ ժամանակի ո՞ր մասն էք նուիրում Ղազարին, այսինքն աղքատութեան և չարչարանաց: Այս կերպ գործադրած ազատ ժամանակը մեծ առաքելութիւն, մեծ բարեգործութիւն է ինչպէս թշուառների, այնպէս և Ձեզ համար: Մի հայեացք գցենք ձեր գործունէութեան վերայ:

Այս աշխարհի փոքրիկներս տանջւում են խեղճութեան և մի պատառ հացի հոգսը մեխում է մեր տեղի վերայ, յոյսներս գնում ենք ձեզ վերայ, ձեզ, որ բոլորի մէջ դուք միայն աստուածանիջ ստացած էք իւրոտ պատառ: Բայց աւա՛ղ, այսպէս յուսալ, այսպէս մտածել կարելի էր այն ժամանակ միայն երբ գոյութիւն չունենային պատուասիրութիւն, եասկանութիւն, աշխարհային ունայնութիւնների, որոնք խլում են ազատ ժամանակը և ամբողջապէս կլանում նրան: Ես օրինակ կը վերցնեմ այն գասակարգից, որը մշտապէս շփւում է ժողովրդի հետ, ծանօթ է նրա կրած չարչարանքներին և չի կարող իրան արգարացնել, որ չէ ճանաչում նրանց:

Ահա հարուստ գործարանատէր, նրա արհեստանոցում մշակները հազարներով են վիստում. այդ բոլոր ձեռքերն ու կամքերը նրան են պատկանում և առաւօտից—երեկոյ նրան են հնազանդում: Նա կարողացել է այս արդիւնաբերող ոյժերը խիստ կարգապահութեան մէջ պահել և իւր փորձառութեամբ, ճարպիկութեամբ ստիպել նրանց ձեռք բերել այն ամենը, ինչ բանի նրանք ընդունակ են: Բայց այս արհեստանոցում տանջուում են. օդը վատաւողջ է, գէմքերը գունատ ու հիւժած. մարդիկ ու կանայք աշխատում են ի միասին. բարոյական մթնոլորտը վարակուած է ամենատեսակ յանցանքներով: Չը նայելով օրէնքին աշակերտը հանգստանալու իրաւունքից զրկուած է նոյն իսկ կիւրակէ օրերը: Եւ ահա նա՝ մեքենայի վերայ կրթնած կանխաժամանակեայ անընդհատ աշխատանքից բթացած, կրօնական և բարոյական կեանքից զուրկ, արեան ապականութիւ-

նից և ողնաշարի հիւանդութիւնից յաղթահարուած, մաշվում է հոգեպէս և մարմնապէս:

Բայց ինչո՞ւ այն մարդը, որի վերայ գրուած է այդ ծանր պատասխանատուութիւնը, արդիւնաբերական ձեռնարկութեան հոգին և գլուխը լինելով, սառնասրտութեամբ է անցնում այդ տանջանքների մօտից, որոնք թեթեւացնելը նրան ոչինչ չէր նստիլ, միայն թէ մի բոպէ ցանկանար գործադրել այն ուղիղ հայեացքները և գործողութեանց մէջ — վճռականութիւնը, որոնցով առաջ է մղում իւր ձեռնարկութիւնները: Բայց նա ժամանակ չունի, միթէ՞ դուք չէք տեսնում ի՞նչն է նրան ամբողջապէս կլանում: Ի՞նչն է նորա ճակատի վերայ կնճիռներ ակօսում: Ի՞նչն է նորա սիրտն ու միտքը լցնում: Նորա առաջ կանգնած են ակոյեաններն, որոց ետեւից պէտք է հասնել, որոց հարստութիւնը, կարծես, ծաղրում է նորա կարողութեան վերայ. նոցա փարթամութիւնն ու փառքը ակեղծում են և գրաւում նորա եղեակայութիւնը. նորանց հասնել պէտք է. իսկ դորա համար հարկաւոր է դեռ գնալ, առաջ արշաւել մի բոպէ չը կորցնելով: Բայց այդ մարդը քրիստոնեայ ամուսին և աղջկունք ունի, որոնք թշուառութիւնը տեսնելով ընդունակ են գթաշարժիլ և մտածել այն հոգարաւոր արարածների մասին, որոնց գոյութիւնը և բազմաթիւութիւնը ամուր կապուած են նրանց սեպհական բարօրութեան հետ: Նրանք աղնիւ հոգի և զգայուն սիրտ ունին: Հարիւր անգամ նրանք արտասուել են սրտաշարժ պատմութիւններ լսելով մտացածին թշուառութիւնների մասին: Նրանք, ինչպէս և դուք, ցաւակցական հառաչանքներ են արձակել ժողովրդի անմխիթար զրութեան, թշուառ մանուկների մասին, որոնք անտէրութիւնից ապականուում, փշանում են և զուրկ են այն ամենից, ինչ որ մեր սրգիքը առատութեամբ և աւելորդով վայելում են: Վարժիք չը կայ, որ նրանք կայցելեն այդ ընտանիքները, մօտից կը տեսնեն թշուառութիւնը, օգնութեան ձեռք կը մեկնեն այդ վշտահար կանանց, աղջկանց:

Աւա՛ղ, մենք հաշուի մէջ չառանք աշխարհային ունայնութիւնները, անմխ զուարճութիւնները: Ղազարի՞ն այցելեն. նոքա՞նք նրանց սիրտը բոլորովին այլ տեղ է. նրանց սիրտը երեկեան և

վաղուեան բաւականութեանց մէջ է գտնուում: Վերջին խնճոյքի և նախընթեր պարերեկոյթի մէջ. անցեալի յիշատակութեանց և ներկայի պճնասիրութեանց մէջ. այս բոլոր պատուասիրութեանց, նախանձախնդրութեանց և ինքնասիրութեանց մէջ: Եւ ի՞նչ ժամանակ կը մնայ մտածել, թէ այնտեղ արուարձաններում, մնայլ և մերկ պատերի մէջ, աղքատ, կրօնազուրկ և թշուառ աղգաբնակութեան մէջ, ի՞նչ է կատարուում: Այո՛, նրանք երբ և իցէ կերթան արուարձանները միայն թէ գեղեցիկ նժոյգներով, հրաշագեղ պճնուած և լի ամենայն հպարտութեամբ, ոչ այցելելու թշուառ ընտանիքների, այլ զբօսանք կատարելու: Եւ հէնց այդ պատկերով միայն ժողովուրդը նրանց ճանաչում է: Հետեւալ կիւրակէին, նրանք՝ ինչպէս և դուք իմ քոյրեր, կայցելեն եկեղեցի, նրանք՝ ինչպէս և դուք, ծանր ծանր դատապարտութիւնների, յանդիմանութիւններ կը տեղան աւետարանական առակի հարուստի վերայ, որը Վաղարտին թողնում է չարչարուելու իւր պալատի դրանք:

Առաջ գնանք և տեսնք այն՝ ինչ որ ամենքը գիտեն և մտածում են: Եթէ ներկայ ժամանակում շատերը չեն ուզում Վաղարին տեսնել, այդ՝ հէնց այն պատճառով է, որ անգիտակ չեն նորա աղքատութեան և որ նոյն իսկ խիղճը կշտամբում է նրանց այդ մասին: Աւետարանը խօսում է անարգար հպարտութեանց մասին: Ի՞նչ անուն պէտք է տալ նրանց շատերին, որոնք երևան են գալիս ներկայումս: Մարգս ձեռնարկում է մի գործ, որի մասին քաջ գիտէ, որ կամ հէնց հիմքից վատ է կամ գոնէ յաջողութիւնը չափազանց կասկածելի է: Շատ հարկաւոր է. նա ձեռնարկում է, և եթէ մի անգամ արգէն ձեռնարկած է, հարկաւոր է որ առաջ գնայ: Լաւ յայտնի միջոցներ ինքն իրանց յայտնուում են: Առանց ձեռք շարժելու ստիպում են նրանց գործել: Շուտով երևում են լրագրական ահագին բէկլամների, համոզիչ յորդորների, ամենախայլուն խոստմունքների, որոնք անխորձ, անգիտակ մարդկանց աչքերում մեծ կշիռ ունին և խոտտանում են արագ և ճիշդ նիւթական շահի բոլոր հրապոյրներ: Եւ այդ ողորմելիները շահանիւթական փորձանքներով վարակուած գնում, յանձնում են,

մէկը իւր ամբողջ կեանքում արեան քրտինքով ժողոված օրալաստակը, միւսը իւր որդւոց օժիտը և հացը, և ինչո՞ւ չը տան: Ո՞վ նրանց միտքը կը բանայ և կը հասկացնի, որ զգուշանան ականերն, որոգայթից, և ահա այն գրամագլուխը, որ կազմուեցաւ ամեն տեսակ ազնիւ աշխատանքի կողոպտումից, մշտապէս աճում մեծանում է մինչև այն րոպէն, երբ յանկարծ փլչում, ցիր ու ցան է լինում: Այժմ ո՞ւր պէտք է գնայ ընտանիքի խեղճ հայրը իւր աշխատանքի պտուղը որոնելու. ո՞ւր գիմէ ողորմելի ծառան, որ 30—40 տարի ազնուութեամբ կատարել է իւր պարտականութիւնը, ի՞նչ անի խեղճ մշակ կինը, որ զրկել էր իրան ամենահարկաւոր բաներից և խնամքով ժողովել կոպէկներ ծերութեան համար: Գնացէք պահանջելու ահա այդ շքեղ պալատի քարերից, որը կարծես դիւթական զօրութեամբ բարձրացաւ. այդ աչք շլացնող փայլունութիւնից, այդ հարստութիւնից, որոնց վերայ ծանրանում է Գրիստոսի անէծքը: Բայց այս իմ երեւակայութեան պտուղը չէ՞ արդեօք. ո՞չ, սա՛ հազարաւոր թշուառների ստոյգ և սիրտ պատուող տխուր պատմութիւնն է: Եւ դուք, իմ ունկնդիրներ, հաւատացած էք, որ մասնակից չէք այս անարդարութիւններին. այսպէս կամ այնպէս նպաստած չէք նրանց. աշխատե՞լ էք արդեօք ուժասպառ անել ձեր օրինակով և սրտի բոլոր ուժգնութեամբ բողբել: Բայց ո՞վ կարող է այսպէս վարուել, եթէ ոչ քրիստոնեան միայն. ո՞վ կարող է ժամանակակից խիղճը զարթեցնել, որը այնքան թեթեւամտութեամբ է վերաբերւում ամեն տեսակ չարութեան, որոնք պսակւում են յաջողութեամբ: Ո՞վ բացի քրիստոնեան, մտաբերել կարող է, որ Աստուած տեսնում է թշուառների տանջանքները, լսում է զրկուածների աղիողորմ հառաչանքները և որ առակի մէջ յիշատակուած անպիտան հարուստի դրութիւնը առաւել լաւ է, քան այն մարդկանց վիճակն, որոնք հէնց անձամբ մերկացնելով Ղազարին, ուրանում են նրան և մահճի մէջ պարկեցնում:

Եւ այսպէս Ղազարին տեսնելը, չարչարանքը նրա մէջ տեսնելը մեր ուղղակի պարտականութիւնն է. բայց այս բոլորը չէ. աւելին պէտք է անել: Հարկաւոր է նրան մօտենալ, որպէս զի նա ձեր ներկայութիւնը զգայ, ձեր ձայնը լսի: Բաւական չէ հեռուից մասնակ-

ցութիւնը: Այդ ձև մասնակցութիւնը սոյորաբար խաբուսիկ է լինում: Կարող է պատահել որ ոչ թէ իսկական հարկաւորութեան կը ծառայի այլ ընդհակառակ շահախնդրութեան և լրաի յանցանքը կը խրախուսի որ ճարպիկութեամբ ծածկուած է լինում աղքատութեան ցնցոտիներով: Այլնչ բան չէ կարող փոխարինել ուղղակի և անձնական ծանօթութեան նրանց հետ, որոնք տանջվում են: Եւ հէնց այդ պատճառաւ Աւետարանն էլ իւրաքանչիւր երեսում համոզում է մեզ աղքատին տեսնել ուղղակի, երես առ երես և անմիջապէս համոզուելով նորա տխուր վիճակի մասին թեթեւցնել նրա դրութիւնը: Եւ որպիսի համոզմունք կարող է Յիսուսի օրինակից աւելի խրատական լինել:

Չէ՞ք նկատել արդեօք այն հրաշալի ուղղութիւնը, որով առաջնորդուում էր Փրկիչը իւր բոլոր բժշկութեանց և գթասրտութեան ժամանակ: Հիւանդին կամ բորոտին մօտենալով շօշափում—բժշկում էր: Քրիստոնէութեան հակառակորդները իրանց տեսակէտից նայելով ասում են. «Յիսուսը» աւետարանիչների ասելով, կարող լինելով առանց տեսնելու բժշկել, ինչո՞ւ մօտենում—շօշափում էր հիւանդներին իր ձեռքերով, ուրիշ ի՞նչ նպատակ կարող էր լինել եթէ ոչ այն միայն, որ ժողովրդի երեւակայութեան վերայ ներգործէր, արդեօք սա բոլոր հրաշագործների ընդհանուր ուղղութիւնը չէ՞: Վիտութեան տարօրինակ ընդդիմախօսութիւն, որ հասկանում է ամենը, բացի սիրոյ ներշնչումից: Այս, Յիսուսը կարող էր առանց տեսնելու էլ բժշկել, բայց նա այդ չէ անում: Իւր աստուածային ձեռքով շօշափում է բորոտներին, անմոքորներին, դիւահարներին, որոնցից ամեն մարդ զղուանքով կը հեռանար: Հէնց սորա մէջն ենք ճանաչում հրաշքների հրաշքը—սիրոյ հրաշքը, որն աշխարհը չէր սոյոր տեսնել: Եւ այս զարմանալի օրինակին պէտք է հետեւենք և մենք: Աներկիւզ կարող եմ ասել, որ այս կերպ հասկացած համակրութիւնը կիսով չափ թեթեւութիւն է պատճառում վշտակիրներին: Յայանի է ձեզ թէ ի՞նչ տխուր հետեւանքի են հասցնում մարդու չափազանց աղքատութիւնը և նեղսակրութիւնները: Թշուառը որչափ ընկնում է, այնքան էլ նա այն համոզման է հասնում, որ ամբողջ հասարակու-

թիւնը նորան հակառակ է ընթանում: Նրան թաւում է, որ այդ հասարակութիւնը իրան մերժում է և կարծես մի տեսակ պայմանաւորուած արտորում է իւր միջից որպէս հնդկական պարիայի: Կարծես պատնէշ է բարձրանում նորա և մնացած մարդկանց մէջ: Եւ ահա դրանից առաջանում են կծու մեղադրանքներ աշխարհի, հասարակութեան և եկեղեցւոյ դէմ՝ որոնք նրանից խորշում— փախչում են, որպէս թէ այս աշխարհը, այս հասարակութիւնը, այս եկեղեցին չեն պարունակում իրանց ծոցում ուրիշ արարածներ, որոնք նոյնպէս չարչարուում, նոյնպէս սխալւում— մոլորւում են իրանց տանջանքների մէջ, ինչպէս և այդ թշուառը:

Երեւակացեցէք, որ այսչափ վշտակրութեանց ժամանակ, թշուառը նկատի, որ այս աշխարհի երջանիկներից մէկը, որին բաղդը շոյշոյում է, նստած իւր գլխաւարածի մօտ սեղմում է նրա ձեռքը և համակրական խօսքեր է արտասանում: Ի՞նչ էք կարծում շուտով չե՞ն ցրուիլ անբաղդի ծանր մտածմունքները: Բայց այս բոլորը չէ. ձեզ լսելով, կարելի է նա հասկանայ, որ վիշտը բնակուել կարող է և նրանց սրտում, որոնք բաղդաւոր են երեւում: Ձեր սգոյ շորերից կը նկատի, որ հարստութիւնն էլ չէ փրկում ամենագառը փորձանքից և կարելի է թէ այդ վշտահար սրտում համակրութիւն զարթնի դէպի ձեզ, մտածելով, որ դուք նոյնպէս արտասուել էք: Մտաբերեցէք թէ Անգլիայում մի քանի տարի առաջ ի՞նչ պատահեցաւ: Հանքահորի զարհուրելի պայթումն երկու հարիւր հանքահաններ կլանեց, կիսաբաց անդունդի վերայ ժողովուեցան այրիների մայրեր և արտասուածքով աչքերով որոնելով իրանց կորած տղամարդկանց ու որդւոյ, անձկութեամբ հարցնում էին. վաղը ո՞վ իրանց մի կտոր հաց կը տայ: Ամբողջ կեանքի համար ապահոված հացը տրուեցաւ նրանց: Այդ հացը ուղարկել էր մի կին, իւր զոհաբերութեան ժամանակ այս հասարակ խօսքը գրելով. «այրիկից»: Այդ այրին Վիկտորիա թագուհին էր. բայց այդ օրը թշուառների համար նա թագուհի չէր, այլ այրի միայն, որը արտասուում էր նրանց հետ: Թագուհի և գահի վերայ, պալատում, հարստութեան և շքեղութեան մէջ կայ մի այրի, որ արտասուում է մեղ հետ, արտասուում է ինչպէս և մենք: Վստահ

կարելի է տեսլ, որ այդ խեղճ կանանց որդւոյ այլ ևս ատելութիւն, արհամարհանք չէին քարոզել դէպի հարուստները: Արտի այս հասարակ համակրութիւնը, թշուառների՝ սրբան դառնութիւն, սրբան վրդալմուռնը խեղդել կարող էր և նոյա չարչարանքները մշտապէս թեթեւացնել: Եւ այսպէս անհրաժեշտ է, որ վրդալիւրները սովորէին ձեզ ծանաչել, այդ անհրաժեշտ է հէնց նրանց համար, անհրաժեշտ է, որովհետեւ Աստուած է պահանջում, անհրաժեշտ է նոյն իսկ և ձեր սեպհական բարօրութեան համար: Գուք կեանքը ծանաչել չէք կարող, մինչև որ աղքատութիւնը երես առ երես չը տեսնէք: Կան բաներ, որ միայն այնտեղ՝ աղքատութեան մէջ կարելի է ծանաչել և որոնք անհրաժեշտ է գիտենալ: Գուք որ ուրախանում էք, որ ձեզ մանուկ ծնաւ, բայց երբ ուրիշ հարկի տակ կը տեսնէք մի մանուկ, որ աշխարհ գալով միմիայն ախորութեան և հիւանդոտ անհանգստութեան առարկայ է լինում և որը այսուամենայնիւ իւր թաթիկները ուրախ և փտահօրէն մեկնում է դէպի այն աշխարհը, որ նրան յետ է մղում, դուք որ ողբում էք ձեր ծնողաց մահը, բայց երբ նոյն սգոյ շորերի մէջ մի ուրիշը կը տեսնէք, որ անտարբերութեան խօսքերով մխիթարուում է, որ մի աւելորդ ծանրութիւն ուսից փայր ընկաւ—այն ժամանակ միայն կը հասկանաք ի՞նչ է կեանքը, ի՞նչ է աշխարհը: Այն ժամանակ դուք ինքներդ ձեզ կը հարցնէք, կարելի է միթէ՞ ապրել անհոգութեան և բաւականութեանց մէջ. կը հասկանաք, ինչ է նշանակում սիրոյ և արդարութեան թագաւորութիւնը ցանկալ: Ահա դատ, որ աղքատութիւնը պէտք է մեզ տայ: Բայց արդեօք հասկանում են այդ:

Աւաղ, երբ տեսնում եմ ներկայ ժամանակում բարբերի ամօթալի խեղաթիւրումն, երբ տեսնում եմ այսպէս անուանեալ լուսաւորուած գասակարգին, որ իւր հայեացքը ոչ թէ ուղղում է դէպի արդար մարդոց տանջանքները, այլ անկիրթ, տգէտ գասակարգի ասականութիւն, բիրտ վարքը, նրանից փոխ առնելով նորա-ձեռութիւններ, վատթար սովորութիւններ, մինչև անգամ նոյն իսկ լեզուն, այն ժամանակ ինքս ինձ հարցնում եմ արդեօք այս հրէշաւոր տեսարանը ի՞նչ կարող է առաջացնել նրանց մէջ, որոնք

սաստիկ նեղուում, տանջուում են և սրպիսի բարոյական անկման կարող է հասցնել նրանց: Բայց ի՞նչ բանի կարող է ծառայել մեր գեթոհոլոթիւնը, եթէ վարույց ապականութեան տարածման հանգէտ չենք դնիլ լայնածաւալ գլխարկութիւնը: Պէտք է գործել, պէտք է ցած գնալ այդ միջին՝ անգնդախոր վայրերը, պէտք է սովորել չարութիւնը երես առ երես տեսնել:

Գիտեմ, ծանր է այդ շփումը, բայց հարկաւոր է փոքր ինչ քաջութիւն ունենալ համարձակ քայլերով մօտենալ նրան: Կան տեսարաններ, որոնք վիրաւորում են մեր քնքշութիւնը, վայելչականութիւնը: Ծայրահեղ աղքատութիւնը վրդալուծ է մեր զգացմութիւնը: Անմաքուր, ծուռ ու մուռ սանդուղտ, մուայլ, նեղլիկ սենեակ, որտեղ շնչում են հեղձուցիչ օդ, մեծ մասամբ գարշահոտութեամբ ապականուած, չքաւորութեան անսահման գարշահոտութիւնների, որ բուրում են ամեն առարկաներ, երեխայք ցնցոտիների մէջ, ողորմելի անկողին, որտեղ հառաչում է հիւանդը, սեղանի վերայ կերակրի մնացորդների, որի միմիայն տեսքը սաստիկ զգուանք է յարուցանում—ծանր է այս ամենը տանել: Այս տխուր տեսարանը ակեղոծող, վրդալեցուցիչ է առաւել նրանով, որ սուր ձայնով համնդում է մեզ զոհաբերութեան անհրաժեշտութեան մասին: Եւ ի՞նչով կարող էք բաւականացնել—թեթեւացնել ձեր երեւակայութեան ճնշումն այս թշուառ արարածների առաջ, որոնց անհրաժեշտն անգամ պակասում է: Կարելի է արգեօք մտածել փայլուն պճնադարդութեան մասին ի տես այս թշուառների, որոնց համար շուայլութիւն է մի բանի սպիտակեղէնն անգամ: Ի՞նչպէս կարելի է անձնատուր լինել ուրախ տօնախմբութեանց, երբ ստիպուած կը լինես մտաբերել այն ողորմելի կերակրի մնացորդների մասին, որոնցով ամբողջ ընտանիքներ իրանց քաղցը պէտք է անցնեն: Չքաւորութեան տեսարանը ձեզ սաստիկ կը նեղացնի, այդ պատճառաւ ցանկանում էք, որչափ կարելի է, շուտով ազատուել, հեռանալ նրանից:

Բայց ո՞վ էք դուք, որ հրաժարուում էք չարչարանքից, միթէ՞ Աստուծոյն ծառայելը միշտ դիւրին է. միթէ՞ երկնային թագաւորութիւնը փշալից ճանապարհով չեն մտնում: Ատուած ազատել է

ձեզ հալածանքներից, արեան զոհերից, որպիսիք նա պահանջում էր ձեր հայրերից, իսկ դուք այնքան վշտալի էք համարում ձեզ համար ուրիշների չարչարանքներին մասնակցելը, որ մինչև անգամ կը ցանկայիք հրաժարուել անձնուիրութիւնից, որ պահանջում է բրիտանական գլխարտութիւնը: Դուք հեռւեցիք Յիսուսին. բայց ինչպէ՞ս էր ձեր Փրկիչը: Մեր դարը Քրիստոսի աստուածային պատկերից մի այնպիսի անորոշ, հաճելի պատկեր է ստեղծել, որը քարշում—տանում է ձեզ միմիայն դէպի բանաստեղծական գաղափարական բարձրութիւնները: Բայց ես այդ պատկերի մէջ չեմ տեսնում վշտալից մարդը, չեմ տեսնում մաքսաւորների, աղքատների Քրիստոսը. չեմ տեսնում Նրան՝ որ գնում էր դէպի վիշտն ու յանցանքը, որքան և ստոր աստիճանի վերայ գտնուէին նրանք: Դուք սաստիկ նեղանում էք աղքատութեան հետ շփուելուց. բայց ի՞նչ է նշանակում ձեր չարչարանքները համեմատաբար նրանց չարչարանքների հետ, որոնք պէտք է ապրեն և մեռնեն այն միջնորդութեամբ, որ դուք չէք կարող առանց զոռանքի մի բոպէ անգամ շնչել: Այժմ աղքատութեան հասարակ տեսքը ձեզ այդչափ սարսափեցնում է, ապա ի՞նչ դրութեան են նրանք, որոնք մի բոպէ անգամ չեն կարող նրանից աղատուել: Դուք եթէ նեղատում էք, բայց ձեր ծանր, ճնշող տպաւորութիւնները ցրելու համար, դուք՝ ամառը ունէք ստուերախիտ ձմեռիքների, ձմեռը՝ շքեղ սենեակների, ընտանեկան օջաղ, ուր միշտ վառ է սլոյծառ կրակը. իսկ աղքատները ունին միմիայն չորս մերկ պատեր, անկուք վերնաստուն, որ երբեմն սաստիկ տաքանում է տօթագին արեւից, երբեմն սառուց է կտրվում. կրակարան առանց կրակի՝ աւելացրէք այս ամենի վերայ աղքատութեան այլ տեսարաններ և ահա պատկերի պակասորդը կը լրանայ: Խեղձին անընդհատ տանջում են առօրեայ վատտակի մւայլ մտածմունքները, առանց որոյ նա՝ հէնց առաջին հիւանդութեան դէպքում զրկուելու է վերջին ապաստանից:

Աղքատութեան պատկերը ձեզ յետ է մղում: Ձեր ճոխութիւնը և մեծացող բարօրութիւնը այնպէս է ձեզ իւր ցանցի մէջ բռնել, որ դուք այլ ևս չէք կարող հնազանդուել Աստուծոյն, որ ձեզ

ուղարկում է՝ վշտակիրների մօտ: Բայց ի՞նչպէս կը վստահանար ներկայանալ Աստուծոյ առաջ և հաշիւ տալ կեանքի ձեզ տուած գասերի համար: Եթէ Նս ևս ձեզ յետ մղէր, ի՞նչ կը պատահէր: Դուք կը զարմանա՞ք, որ ձեր ետականութիւնը, երկչոտութիւնը, շքեղութիւնը Աստուծոյ սիրոյն հակառակ է: Միթէ՞ դուք կարծում էք, որ դուք այդ սիրոյ համար առաւել գրաւիչ տեսարան կարող էք ներկայացնել, քան աղքատութիւնն, որից ձեր երեսը դարձնում էք: Միթէ՞ դուք կարծում էք, սիրաւ որ մերձաւորի համար չարչարուել չը գիտէ Մայրագոյն դատաւորի աչքում արդար զգուանքի առարկայ չէ կարող լինել: Միթէ՞ դուք կարծում էք, որ կարող էք արդարանալ յենուելով ձեր բնական քնքշութեան և բնագոյղական զգուանքի վերայ: Պատասխանեցէք... կամ՝ շուտով հնազանդուեցէ՛ք այն խորհրդաւոր ձայնին, որ ձեզ անհանգստացնում—վրդովում է և բարձրաձայն աղաղակում, որ առանց չարչարանաց փրկութիւն չը կայ և ոչ յաւիտենական երանութիւն առանց զոհաբերութեան: Բայց արդեօք ամենայն ինչ տապի՞, որպէս զի ձեզ երես առ երես կանգնացնէի չարչարանքների առաջ: Այո՛, եթէ միայն սիրաւ արդար լինէր, եթէ միայն սիրաւ ինքնուրոյնութեան և ողորմածութեան խրատական ուրամբանութեան հետեւէր: Բայց իսկապէս, նոյն իսկ մերձաւորի տանջանքների ներկայութեամբ սիրաւ դատողութիւն է տալիս, սակարկութիւն է անում, խրաբանչիւր քայլափոխում վիճարանում է սիրոյ հետ: Դուք խոստովանում էք, որ քրիստոնէական սիրոյ լոնգիրը անսահման է, որ նա դրուած է ձեզ վերայ իբրեւ պարտք. բայց ո՞ր գիտէ ողորմածութեան հէնց առաջին հրաւերի ժամանակ, չէ՞ք փակիլ արդեօք ձեր բերանը այս հասարակ խօսքերով. «Եմ կարող»: Յանկալի է ինձ հաւատալ, որ այս պատասխանը դուք թեթեամբութեամբ չէք տալ և ես նրան թեթեամբութեամբ չեմ ընդունիլ: Այո՛, ես ձեզ չեմ էլ դատապարտում եթէ Աստուծոյ առաջ դուք չէք կարող, այդ արդէն բաւական է ինձ համար: Ես գիտեմ, որ ամեն բան սահման ունի, գիտեմ, որ ազատութիւնը յարգել պէտք է, և ես նրան կը յարգեմ: Ձեզ եմ հարցնում, ի՞նչ կը պատահէր մեզ առանց փոխադարձ յար-

գանաց, որ պատուիրում է մեզ Աւետարանը: Ի՞նչ կը պատահէր մեզ եթէ գաղտնադատութեան ոգին, ողորմածութեան պատուակոյի, իրան աղատութիւն տար և որոշէր իւրաքանչիւր մարդու անձնադոճութեան չափը: Եւ պատրաստ եմ յարգել ձեր պատասխանը, միայն թէ թոյլ տուէք ինձ աղաչել ձեզ, որ առաջ քան կը տաք այդ պատասխանը, շրջապէսայեաց լինինք, խորին կերպով մտածէք, թէ արդեօք անկեղծ է, լրջօրէն է նա. «...» և «...»: Բայց ինչու համար դուք չէք կարող: Արդեօք ո՞չ նրա համար որ աշխարհը յափշտակել է ամեն բան, մինչև անգամ աղքատի մասը: Արդեօք ո՞չ նրա համար, որ դուք նոյնպէս անձնատուր էք եղած միրկածուփ շուայութեան հոսանքին, որի առաջը շուտով ոչինչ բան չէ կարող առնել: Ո՛հ, եղբարք, այս աշխարհին պէտք է ասել. «չեմ կարող»: Եւ այդ պէտք է ասել ամենայն հաստատամտութեամբ, անկեհեր կերպով, երբ նա պահանջում է անխորհուրդ, անշահ ծախսեր, պճնադարձութեան և կահ-կարասեաց ճոխութիւն, նուրբ քնքշութիւնների, որոնց առաջ դիւրին կերպով խոնարհում է ձեր սնտախառութիւնը: Եթէ դուք աշխարհին այդպէս ասէիք, ի՞նչ կը կորցնէիք: Դուք անձնատիրութեան վերայ յաղթանակը կը տանէիք, որ միայն ճնշում է ձեր սիրտը: Ենթադրեցէք մինչև անգամ որ ձեր խիստ չափաւորութիւնը գաղտնադատէին, մեղադրէին: Բայց միթէ՞ դրան տանել չէիք կարող: Միթէ՞ ոչինչ բանով չը պէտք է զանազանուի քրիստոնէական ընտանիքը աշխարհիկ գերդաստանից, և միթէ՞ բարեպաշտ մարդիկ կարող են խոնարհութեամբ հետևել աշխարհի պահանջներին, որոյ հաւանութիւնը թակարդ է, գովասանքը—փաղաքշումները կորստաբեր: Բայց չը համարձակուելով աշխարհին ասել, դուք մոռնում էք ձեր Փրկին ասել. «չեմ կարող»: Միմիայն ձեր Փրկի համար էք բացառման քաջութիւն պահպանում: Դուք երկիւղ չէք կրում, որ Նրան կը արտմեցնէք. ձեզ համար ի՞նչ է նշանակում Նրա խրախոյսը կամ յանդիմանութիւնը: Ճշմարիտ է, որ Նա ձեզ փրկել է աննրկամ կարագրելի չարչարանքների գնով, ճշմարիտ է, որ Նա կը գայ ձեզ մօտ փշեաց պսակով, ծակոտած ձեռքերով ու ոտքերով. ճշմարիտ է, որ ձեր կեանքի վերջին ժամում երբ բոլոր աշխարհը այլ ևս

անկարող է ձեզ ոչինչ ասել, դուք կը հրաւիրէք Նրան ձեզ հետ մահուան մուտք հալիսն անցնելու և օստիոսեանականի դատարանին ներկայանալու: Շատ հարկաւոր է: Այժմ, դուք սպասուպատշաճը աշխարհին փճարելով, սառնասրտութեամբ ասում էք Նրան. «Կո՛րեզ համար ոչինչ չունիմ»:

Ինձ մնում է միայն մերկացնել և մի խմստակութիւն, որով շատ անգամ պաշտպանում են շուայութիւնն և աշխարհային ունայնութիւնը: Մեզ ասում են. «փոխանակ աղքատներին ողորմութիւն բաժանելու, շուայեցէք որքան կարելին է և զուարճացէք կեանքով: Ձեր շուայութիւնը ժողովրդին վատտակ կը տայ, իսկ վատնումը արդիւնաբեր կը լինի նրա համար: Որքան աւելի մեծաշուք հագնուէք, որքան ճոխ սեղան ունենաք, որքան շուայ զարգարէք ձեր բնակարանը, այնքան աւելի շատ ձեռքեր կ'աշխատեն, այնքան աւելի շատ բնտանիքներ կ'աղատուեն չքաւորութեան ճիրաններէջ»: Ըստ երևոյթին՝ գեղեցիկ միջոց, գովելի վարմունք, թէ և ոչ միշտ վստահութեամբ խոստովանում են այդ, միայն թէ այդ միջոցով յաճախ թմրեցնում հանգստացնում են խիղճը, երբ հարկաւոր է լինում իրանց հաճոյքներին բաւականութիւն տալ:

Բայց արդեօք հիմնաւոր, իրաւացի են այս պատճառաբանութիւնները: Մինչև վերջը հասցնենք այս սկզբունքը, Դուք ասում էք, որ շուայութիւնը, ճոխութիւնը աղքատութեան փրկիչն է, եթէ դուք արդար էք, վատնեցէք ուրեմն աւելի և աւելի, հնարելով նորանոր անմիտ բաւականութիւններ և վայելքներ, այս հաւատը շատ յարմար է մեր բնութեան գաղտնի բնազդումներին: Թող կորչի այն մուտք բարեպաշտութիւնն, որ քարոզում է ինքնազոհութիւն և զրկանք: Շուայութիւն արէք որքան կարելին է, և երբ դուք բաւականութեանց մէջ կը լողաք, որոնց Հոռոմն ու Բաբելոնն անգամ կը նախանձէին, ձեր փրկած ժողովուրդը մշտապէս կը մոռանայ չարչարանքը և երկրի վերայ գրախորդ կը սկսուի:

Ահա ձեր ընդունած սկզբունքի ուղղակի հետեանքը: Բայց ակնհայտ է, որ նա անհեթեթ է. ուրեմն անհեթեթ է և՛ նոյն իսկ սկզբունքը: Առողջ դատողութիւնը և կեանքի փորձերը շատ վաղուց հաստատել են, որ շուայ վատնումը անպայման արդիւնաբեր

չէ՛, որքան աւելի կենդանի ոյժեր կը նուիրեն աւելորդ բաներ արտադրելու, այնքան աւելի քիչ ոյժ կը մնայ անհրաժեշտ առարկաների արգիւնաբերութեան համար: Երբ դուք տեսնում էք մեր գիւղերից հազարաւոր մշակներ կորզած և գլխած կանգնուող սղախոտների վերելեակների վերայ կամ արհեստանոցներում, որոնք արգիւնաբերում են մեր փայլուն կերպասները, շուայլութեան առարկաները, միթէ՞ դուք չէք կարողանում հասկանալ — ըմբռնել, որ այդ ոչ արգիւնաբեր շուայլութեան պատճառով, հայրենի երկրի պտղաբերութիւնը նուազում է: Երբ ոսկու դեզեր գործ էք զնում թանկագին առարկաներ շինելու համար, սրանով միթէ՞ դուք մի կողէի անգամ կարողանում էք աւելացնել այն դրամագլխի վերայ, որով ապրում է մարդկութիւնը: Եւ այսպէս ձեր սկզբունքը սխալ է, միեւնոյն ժամանակ և անողորմ, որովհետեւ նորա ծայրահեղ հետեւանքը սով միայն կարող է լինել: Եւ դուք նրան կը հանդիպէիք ժողովրդական յուզման հէնց առաջին օրը: Երբ մի որեւէ անհուպասելի, աննախատեսանելի դիպուածում բոլոր պայմանական գները թալէ-ապէս միանգամից ընկնեն, արդեօք ի՞նչ կը պատահի այն հարիւր հազարաւոր մարդկանց, որոնց ձեր շուայլութիւնը խլել է դաշտային քաջարի և առողջ աշխատանքից: Մեծ քաղաքների մայրքերի վերայ շարտածները, ընտելացած թէ առօրեայ թեթեւ փառասկիւն, և թէ թեթեւ կերպով փառներուն, միմիայն փառնգ կարող են սպառնալ ձեզ, փառնգ, որ առաւել դարհուրելի է, փառն գի մերձաւորապէս տեսնելով ձեր անմիտ շուայլութիւնները, նախանձով և ատելութեամբ են լցվում դէպի ձեզ, իրանց սեպհական շքաւորութեան պատճառով: Բայց այս բոլորը չէ՛, այդ սկզբունքը ոչ միայն անողորմ է, այլ և անբարոյական. անբարոյական է հէնց ձեզ համար, որովհետեւ շուայլութիւնը զուարճութիւն է, իսկ զուարճութիւնը սահման չունի, որքան և նրբացած ներկայացնէին նրան, հոգւոյ և կամքի նուաստացումն է նա, եսականութեան բաւարար, որոյ անմիջական հետեւանքը սրտի խտուրթիւնն ու ամայութիւնն է: Անբարոյական է այդ սկզբունքը և ուրիշների համար, որոնց ձեր օրինակը ծառայում է որպէս դաս: Մշակը որ ձեր առաջն է և ձեր կեանքի վիճան

կը մտածի. «Ինչու և ես չը զուարճանամ: Ինչու ինքնուրացութեան խիստ և անսղօքմ օրէնքը դրօշմեմ ինձ վերայ: Եւ նա կը սկսի զուարճանալ և նա կը շարտի կտպիս բաւականութիւնների մէջ իւր օրավարձը: Չեր նրբացրած բաւականութեան փոխարէն, նա կունենայ պանդոկներին, օլեաների բաւականութիւնը: Ինչպէս կարող էք այս տխուր հեռեանքների առաջն առնել: Ենթադրեցէք, որ նրանք առաւել և առաւել դարգանում, առաջ են գնում: Շուտով յուզուած, չարչարուած հասարակութեան միմին խորքերից կը բարձրանան ժողովրդական կատաղի ձայներ, որոնք կասեն. «զուարճանալ, այդ ամենի իրաւունքն է. Գուք մեզ երկնքում գրախտ էք ցոյց տալիս, բայց դուք ստախօսում էք, որովհետեւ դուք ինքներդ նրան որոնում էք միմիայն երկրիս վերայ: Գուք կրօնասէր մարդիկ, ժողովում էք այստեղ բոլոր բաւականութիւնները, բոլոր նրբութիւնները, բոլոր ուրախութիւնները, որոնք ձեզ պարգեւել կարող են միմիայն մեր աշխատանքը: Շատ լաւ: Բայց և մենք, մեր գրախտը ցանկանում ենք նոյնպէս ունենալ երկրիս վերայ, ցանկանում ենք հենց վաղը, մինչև անգամ այսօր: Բաւական էր որքան մատնացոյց արիւր երկնքի վերայ, գերեզմանի այն կողմը, գիտութիւնը մեզ համար ևս ճշմարտութիւնը երևան հանեց, և մենք չենք ցանկանում թափել մեր քրտինքը. մեր արտասուքը անհատանելի ունչութեան համար: Մենք յոգնեցանք սպասելու, մեզ հարկաւոր է բաղդաւորութիւն, հարկաւոր է հէնց այս կեանքում, որի մէջ մինչև հիմայ միմիայն զրկանքներ ենք ձանաչել ու ճաշակել: Մեր երջանկութիւնը նոյնպէս շռայլութեան, հարստութեան, բաւականութեանց, այդ բոլոր երկրային բարիքների մէջն է, որոնք և մեզ տրուած են ինչպէս և ձեզ: Մեր երջանկութիւնը մեր առաջն է, նրան ստանալու համար, բաւական է միայն ցանկանալ: Վա՛յ նրան, ո՞վ կը մտածէ մեզ խանգարել, արգելք լինել: Զուարճանալ, դա՛ կեանքի վերջին նպատակն է. մենք ցանկանում ենք զուարճանալ, և մենք կը զուարճանանք, որովհետեւ մեր անունը լէգէօն է: Ահա թէ ինչ կարող են ձեզ ասել երբ դուք թոյլ էք տալիս կարծել, որ մէկի զուարճութիւնը, միւսին կարող է աղքատութիւնից փրկել: Գուք չէք կարող խուսափել այս դար-

Հուրելի տրամաբանութիւնից: Թող Տէրը պահպանի մեր հայրենիքը այդ տխուր երևոյթներէից: Բայց ես չեմ կամենում ներգործել ձեզ վերայ արհաւիրքներով: Եթէ լոկ երկիւղը կարողանար ձեզ դէպի բարին առաջնորդել, առաւել լաւ է, որ ես իջնէի այս ամբիօնից, որտեղ Աւետարանի պահանջման համաձայն ուրիշ լեզու պէտք է հնչեցնել, աւելի վսեմ աւելի արժանաւոր թէ Աստուծոյն, թէ ձեզ: Աղքատութիւնը թեթեւացնելու համար ես առաջարկում եմ և կառաջարկեմ յետոյ, միմիայն մէկ միջոց. դա Քրիստոսի ոգին է, որ միւսնոյն ժամանակ և՛ արդարութիւն է և՛ գթասրտութիւն:

Աշխատեցէք, եղբայրներ, այս ոգւով, այսօր, վաղը և միշտ, քանի որ երկրի վերայ կը լինի աղքատութիւն, որ օգնութեան պէտք ունի, և չարչարանք, որ մխիթարութիւն է որոնում:

Խ. Բ. Խ.:

(Բերախէ):